



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

09.04.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/43**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով Ֆ/Ա Արսեն Պետրոսյանի 20.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. Ֆ/Ա՝ Արսեն Պետրոսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ֆ/Ա Արսեն Պետրոսյանը (այսուհետ՝ նաև Ֆ/Ա) 20.03.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 14.02.2018թ. մարտկոցների և մարտկոցների լիցքավորիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրով սահմանված է հետևյալը.

- 3-րդ չափաբաժին՝ մարտկոց կուտակիչ (լիցքավորող), տեսակը՝ AA, բաղադրությունը՝ NiMH, նոմինալ վոլտաժ՝ 1.2 V, նոմինալ տարողություն՝ 2600 mah կամ բարձր /ստանդարտ լիցքավորում/ լիցքավորման լիցքավորման աստիճանով՝ >1820(70%)/

պահպանումը՝ 5-7օր 45 °C, 0.2C ստանդարտ լիցքաթափման դեպքում/, չափսերը՝ բարձրությունը մինչև վերին հատված 50մմ +/- 1մմ, լայնություն 14.2մմ +/- 1մմ, հարաբերական խոնավություն՝ 65±20% / ստանդարտ լիցքավորում/լիցքաթափում, որակի սերտիֆիկատ, ԻՍՕ սերտիֆիկատ, արտադրողի կողմից նամակ-հավաստագիր տվյալ ապրանքի համար ՀՀ ՊՆ անունով:

- 5-րդ րդ չափաբաժին՝ մարտկոց կուտակիչ (լիցքավորվող), տեսակը՝ RCR123A, բաղադրությունը՝ Li-Ion, նոմինալ վոլտաժ՝ 3V, նոմինալ տարողություն՝ 600mah կամ բարձր /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, չափսերը՝ բարձրությունը մինչև վերին հատված 33.5մմ +/- 1մմ, Լայնություն 16.5մմ +/- 1մմ, ստանդարտ փորձարկման ջերմաստիճան՝ 25±2C, աշխատանքային ջերմաստիճան՝ լիցքավորում 0-ից +45 C, լիցքաթափում -20-ից +60 C, շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ Ta=20±5°C /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, հարաբերական խոնավություն՝ 65±20% /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, որակի սերտիֆիկատ, ԻՍՕ սերտիֆիկատ, արտադրողի կողմից նամակ-հավաստագիր տվյալ ապրանքի համար ՀՀ ՊՆ անունով:

Իմ կողմից 16.02.2018թ. ներկայացվել էր հետևյալ պարզաբանման հարցումը.

«- Մարտկոց 1,2V AA, մարտկոց 3V Li CR123A և նմանատիպ այլ մարտկոցների տեխնիկական բնութագրում առկա են հետևյալ պահանջները՝ որակի սերտիֆիկատ, ԻՍՕ սերտիֆիկատ, արտադրողի կողմից նամակ-հավաստագիր տվյալ ապրանքի համար ՀՀ ՊՆ անունով: Իմ ունեցած տեղեկություններով այդ մարտկոցները սերտիֆիկացման ենթակա ապրանքներ չեն: Արդյոք դա նշանակում է, որ ներմուծված մարտկոցների համար ՀՀ տարածքում պետք է դիմել և ստանալ որակի սերտիֆիկատ:

- Մարտկոց 3V Li CR123A համար նշված է նոմինալ վոլտաժ՝ 3V: Մեր ունեցած տեղեկություններով, Ձեր կողմից նշված 600 mah կամ բարձր նոմինալ տարողությամբ այս մարտկոցների վոլտաժը լինում է 3.6-3.7V: Արդյոք այս 3.6-3.7V վոլտաժը ընդունելի է Ձեր համար:»

Հարցմանն ի պատասխան ՀՀ ԶՈՒ ՍՎ ՀՀՍ ծառայության պետ Վ. Հովհաննիսյանը տվել է հետևյալ պարզաբանումը.

«1. Որակի սերտիֆիկատ, ԻՍՕ սերտիֆիկատ, ՀՀ ՊՆ անունով արտադրողի կողմից տվյալ ապրանքի համար նամակ-հավաստագիր պահանջվում է արտադրող կազմակերպությունից:

2. «Նոմինալ վոլտաժ՝ 3V և նոմինալ տարողություն՝ 600 mah կամ բարձր» բնութագրերը ներկայացված են հաշվի առնելով ՀՀ ՊՆ-ում արդեն իսկ համապատասխան

սարքերի և սարքավորումների համար շահագործվող մարտկոցների բնութագրերը, որոնք իրենց հերթին նշված բնութագրերով ապահովում են դրանց անխափան աշխատանքը»:

Հաշվի առնելով հարցմանը տրված պարզաբանումը, նշված մրցույթին հայտ չեն ներկայացրել, քանի որ չէի կարող ապահովել նշված տեխնիկական բնութագրի պահանջները:

Հետագայում ավելի խորը ուսումնասիրություններ կատարելով պարզել եմ, որ ստանդարտ լիթումիոնային վերալիցքավորվող, 600 mah կամ բարձր նոմինալ տարողությամբ CR123 տիպի մարտկոցների իրական նոմինալ լարումը լինում է 3.6-3.7 վոլտ: Լիցքավորումից հետո լարումը կարող է հասնել մինչև 4.2 V և հետագա աշխատանքի ընթացքում կարող է իջնել մինչև 2.4 V: Հաճախ, նշված ապրանքատեսակի տեխնիկական պարամետրերին ոչ լիարժեք տեղյակ մարդկանց լայն զանգվածներին շփոթմունքի մեջ չզգելու ցանկությամբ առաջնորդվելով, վաճառող կազմակերպությունները պատվիրում են արտադրողներին ստանդարտ լիթումիոնային վերալիցքավորվող CR123 տիպի մարտկոցների վրա 3.7 V նոմինալ վոլտաժի փոխարեն նշել 3 V, որպեսզի շփոթմունք չառաջանա և իմացվի, որ սույն վերալիցքավորվող CR123 մարտկոցներով կարող են փոխարինել չլիցքավորվող կալինիային կամ այլ քիմիական պարունակությամբ 3VCR123 լայն սպառման մարտկոցներին, ինչը նշանակում է, որ Ընթացակարգի հրավերի 5-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրում նշված 3V նոմինալ վոլտաժով լիթումիոնային վերալիցքավորվող, 600 mah կամ բարձր նոմինալ տարողությամբ CR123 տիպի մարտկոցներ գոյություն չունեն, նշվածը հիմնավորվում է նաև համապատասխան սարքավորումներով չափումներ կատարելու արդյունքում, ինչի հնարավորությունը հուսով եմ << պաշտպանության նախարարության համապատասխան մասնագետներ ունեն:

«Գնումների մասին» << օրենքի 13-րդ հոդվածի՝

- 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.
- 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Մինչդեռ Ընթացակարգի հրավերի 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրում նշված «<< ՊՆ անունով արտադրողի կողմից տվյալ ապրանքի համար նամակ-հավաստագիր», «Որակի սերտիֆիկատ» ներկայացնելու և 5-րդ

չափաբաժինի մասով նոմինալ վոլտաժը՝ 3V լինելու պահանջները հասկասում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝

- 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

- 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Ընթացակարգի հրավերի 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրում նշված «ՀՀ ՊՆ անունով արտադրողի կողմից տվյալ ապրանքի համար նամակ-հավաստագիր», «Որակի սերտիֆիկատ» ներկայացնելու և 5-րդ չափաբաժինի մասով նոմինալ վոլտաժը՝ 3V լինելու պահանջները խոչընդոտներ են ստեղծել Ընթացակարգի մասնակցության համար:»:

Ֆ/Ա Արսեն Պետրոսյանը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Կասեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով ընթացակարգի արդյունքներով 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագրեր կնքելու գործընթացը:

2. 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մարտկոցների և մարտկոցների լիցքավորիչների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով գնման ընթացակարգը:

Ֆ/Ա Արսեն Պետրոսյանը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ներկայացել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1028 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով հրավերի շրջանակներում Ֆ/Ա Արսեն Պետրոսյանը կատարել էր հարցում, որին տրվել է սպառիչ պարզաբանում, սակայն

վերջինիս կողմից բողոքարկվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով մրցույթը, որի կապակցությամբ ներկայացնում ենք ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը.

-3-րդ չափաբաժնի՝ Մարտկոց 1,2V AA տեսակի համար տեխնիկական բնութագրով պահանջվում է որակի սերտիֆիկատ, ԻՍՕ սերտիֆիկատ, արտադրողի կողմից նամակ-հավաստագիր, որը հաղթող ընկերությունը պարտավորվում է ներկայացնել:

-5-րդ չափաբաժնի՝ Մարտկոց 3V Lil125A տեսակի համար «Նոմինալ վոլտաժ՝ 3V» և «Նոմինալ տարողություն՝ 600mah կամ բարձր» տեխնիկական բնութագրերում ներկայացված են հաշվի առնելով ՀՀ պաշտպանության նախարարությունում արդեն իսկ համապատասխան սարքերի և սարքավորումների համար շահագործվող մարտկոցների բնութագրերը, որոնք իրենց հերթին ապահովում են դրանց անխափան աշխատանքը և հնարավոր չէ տեխնիկական բնութագրերով ներկայացնել այլ՝ չնախատեսված տվյալներ:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ Գալստյան Իշխանը, Գալստյան Վիլենը և Գասպարյան Տիգրանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է Ֆ/Ա Արսեն Պետրոսյանի (այսուհետ նաև՝ Ֆ/Ա) կողմից 20.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Խորհրդին ներկայացված 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1028 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ մարտկոցների և մարտկոցների լիցքավորիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2018թ. փետրվարի 23-ին, ժամը 10:00-ին:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագրով 3-րդ և 5-րդ չափաբաժաինների ապրանքատեսակների համար սահմանվել են հետևյալ հատկանիշները.

- 3-րդ չափաբաժին՝ Մարտկոց AA տեսակի (Մարտկոց 1,2V AA) տեսակը՝ AA, բաղադրությունը՝ NiMH, նոմինալվոլտաժ՝ 1.2 V, նոմինալտարողություն՝ 2600 mah կամ

բարձր /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, լիցքավորման պահպանում՝ $\geq 1820(70\%)$ /պահպանումը՝ 5-7օր 45 °C, 0.2C ստանդարտ լիցքաթափման դեպքում/, չափսերը՝ բարձրությունը մինչև վերին հատված 50մմ +/- 1մմ, լայնություն 14.2մմ +/- 1մմ, հարաբերական խոնավություն՝ $65\pm 20\%$ /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, որակի սերտիֆիկատ, ԻՍՕ սերտիֆիկատ, արտադրողի կողմից նամակ-հավաստագիր տվյալ ապրանքի համար ՀՀ ՊՆ անունով:

• 5-րդ րդ չափաբաժին՝ Մարտկոց կուտակիչ (լիցքավորվող), տեսակը՝ RCR123A, բաղադրությունը՝ Li-Ion, նոմինալ վոլտաժ՝ 3V, նոմինալ տարողություն՝ 600mah կամ բարձր /ստանդարտ լիցքավորում/լիցքաթափում, չափսերը՝ բարձրությունը մինչև վերին հատված 33.5մմ +/- 1մմ, Լայնություն 16.5մմ +/- 1մմ, ստանդարտ փորձարկման ջերմաստիճան՝ $25\pm 2C$, աշխատանքային ջերմաստիճան՝ լիցքավորում 0-ից +45 C, լիցքաթափում -20-ից +60 C, շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ $T_a=20\pm 5^{\circ}C$ /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, հարաբերական խոնավություն՝ $65\pm 20\%$ /ստանդարտ լիցքավորում/ լիցքաթափում, որակի սերտիֆիկատ, ԻՍՕ սերտիֆիկատ, արտադրողի կողմից նամակ-հավաստագիր տվյալ ապրանքի համար ՀՀ ՊՆ անունով:

Ֆ/Ա Արսեն Պետրոսյանը Խորհրդին 20.03.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրում նշված «ՀՀ ՊՆ անունով արտադրողի կողմից տվյալ ապրանքի համար նամակ-հավաստագիր», «Որակի սերտիֆիկատ» և 5-րդ չափաբաժինի մասով «նոմինալ վոլտաժը 3V» հատկանիշները հասկասում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի և նույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին և խոչընդոտներ են ստեղծել Ընթացակարգի մասնակցության համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բողոքով վիճարկվում է գնման առարկաների տեխնիկական բնութագրերն, իսկ Բողոքը ներկայացվել է ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, Խորհուրդը չի անդրադառնում Բողոքում նշված փաստական հանգամանքներին և իրավական հիմքերին:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ֆ/Ա Արսեն Պետրոսյանի կողմից 20.03.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ